րը ու վէճերը կորոշէ։ Իրաւցընէ աս կողմերը ու-րիշ դատերը քիչ մը երկան կերթան, բայց լու-մայադրի (փոլիցայի) դատը շուտով կորոշեն, անանկ որ սեղանաւոր կամ վաճառական մը լումայափոխի մը վճարելու օրը եկածինպէս՝ թէ որ չիկրնար վճա-րել նէ առնելիքին տէրը կուգայ աս դատաստանը կամբաստանէ, ու նոյն օրը սեննեակը կըգոցեն, ինչ ունի չունի՝ կըծախեն վճարել կուտան, ու ինքը անանկ (միւհլիւզ) կըլլայ։

ԳԼՈՒԽ ԻԲ։

Վենետացիներուն արհեստները պայծառացընելու ջան-քը ու երենց գործարանները։

1. Վենետացիներուն բաղձանքը արհեստնե-րը պայծառացընելու արդէն բաւական բորբոքած էր․ բայց քանի որ Կօստանդնուպօլիս Լատիններունը դրվեցաւ նէ՝ մէջերնին ալ մեծ եռանդ ինկաւ․ վասն զի ինչ-պէս վերը (Եր․ 124․) գրեցինք աս ուսումնարանին վախճանը աշխարքին մէջը գտնըված արհեստները Վենետայի ու անկէ բոլոր տէրութեն մէջը տարածել՝ ու օրէ օր բարեկցընել ըլլալով, կայսրը ուր որ վարպետ արհեստաւոր մը ըլլալը կըլսէ նէ, բերել կուտայ, ու ասոր մէջը վարպետ կըդնէ, ուր որ արուեստաւոր (մարիֆէթլի) նոր գործք մը կըւ-

լայ նէ, բերել կուտայ՝ օրինակի համար աս տեղս կըդնէ։ Վեննացի վարպետներն ալ նոր գտնըված գեղեցիկ բան մը կըշինեն կամ կըգործենենէ, կայսըրը կառնու՝ ու ժամանակը ու շինողին անունը վրան գրած օրինակի համար հոս դնել կուտայ։ Հիմայ ինը տարվան մէջ ամէն տեսակ արհեստներէն 20,000 ասանկ բաներ ժողված, ու չորս մեծ մեծ սենեակներու մէջ գեղեցիկ տեղաւորած են, որ ամէն մարդ տեսնէ, ու ջանք ստանայ ասանկ բաներու։ Անոր համար շաբաթ օրերը երթալու աս տեղը տեսնելու հրաման կայ, ինչպէս յառաջ (Եր. 178.) ըսինք։

2. Վեննայի արուարձաններուն մէջը՝ ու կէս ժամ՝ մէկ ժամ ու ալ աւելի հեռու շրջանակները շատ գեղեցիկ գործատուններ կան, որոնց մէջէն մինակ երեւելիները գրենք։

Հողէ ամաններ շինելու երեսուն տեսակէն աւելի գործատուններ կան, որ մէկզմէկէ գեղեցիկ ու աւելի կատարեալ են։ Հինգ վեց տեսակ քարէ շինած ամաններու գործատուններ կան, որ ֆայօլէնգա կըսվին, որոնց մէջը մէկ տեսակը կայ՝ որ մէջը կերակուր կեփվի ու չիճաթիր։

3. Կայսերական ֆօռչէլլանա ամաններուն գործատունը քան զամէնը գերազանցը ու երեւելին է, որուն մէջը հիմակվան շինված բաները թէ՛ նուրին մաքրութենը ու թէ քաշվածներուն գեղեցկութենը համար Չինմաչինիններէն շատ ընտիր

ու սուղ են, ու օրէօր աւելի կըգեղեցկացընեն, անանկ որ հատը մէկ թուղթ ֆիօրինէն մինչվան 100 արծաթ ֆիօրին սկաւառակ (թապախ) կըծախվի կոր: Ասոնց նիւթը երկու տեսակ ճերմակ քարեր են, որ կըծեծեն բարակ կաղամ՝ ջրով կըշաղվեն՝ կաւ կըշինեն, ու անկէ ամէն տեսակ սկաւառակներ՝ տափակ՝ խորունկ՝ մեծ՝ պզտիկ՝ ապուրի՝ խաշածի՝ բարակ կերակուրներու՝ անուշեղէններու՝ պտուղներու ամաններ, սեղանի ու սեւ ջուրի կահեր կարասիներ կըշինեն: Շատ դիմացկուն ամաններ են, անանկ ալ սըռ կուտան, որ որչափ կըգործածվին նէ՝ դանակով ամենեւին չեն գծվիր, ու միշտ նոր կըմնան: Մէջը 800 հոգի կըբանին. 165ը [illegible] կըքաշեն, 88ը կըշինեն, մնացածները՝ ո՛րը քարը կըծեծէ, որը կըշաղվէ, ու ուրիշները ուրիշ բաները կըշինեն: Տարին 1,000,000 արծաթ ֆիօրինի բան կըծախվի. հեղ մը 60,000 կտոր մէկէն ծախված է, տարի մըն ալ 12էն մինչվան 60 հոգւոյ համար ամմէն բանովը մէկ տեղ 800 ամբողջ սպաս (թախըմ) ծախված է: Մնցած բաները պահելու տեղ մը ունի, որ մէկզմէկէ գեղեցիկ ամաններով միշտ լեցուն է, անանկ որ, մէջը մտնօղը կըզմայլի: Աս տեղս շատ մեծ ու մաքուր հայլիներ ալ կան, որ կայսերական հայլէյի գործատունը շինված են: Աս բաները տեսնելու հրամանը ան տեղաց մեծ վերակացուէն պէտք է առնուլ:

8. Գըլխարկի (շապղայի), ամէն տեսակ կա-

շինէր շինելու քթան ու պամբակ մանելու գեղեցիկ գործատուններ կան, որ մէկ ճախարակով (չարխով) 500 թել մէկէն կըմանին։ Ամէն տեսակ կտաւներ բանելու, կտաւի վրայ տպելու, մետաքսեղէն (փիթէ-կէ) գործուածքներու գործատուններ կան. շատ նոր նոր մետաքսէ բաներ ալ 1819ին գտան, ու բանիլ սկսան, որ յառաջուց չէին գիտեր։ Ոսկեմանու-թեան (սրմաքէշութեան) գործատուններ կան, որոնց մէջը պղնձէ՝ արծըթէ ու ոսկիէ թելեր, չէ-բէքներ, փուլէր, ու ամէն տեսակ բաները կըշինեն։ Որդէ, բամպակէ, ու մետաքսէ չէրչէֆ, խոյլերու շի-նելու գործիքներ գտած են, որ պզտիկ տղայ մը ճախարակ մը դարձընելով՝ տասը հատը մէկ տեղ կըգործըվին, ու օրը մէկ հոգի 900 կանգուն կընայ բանիլ։ Դարձեալ ասղնեգործութեան (Գուէնկիշի բանելու), թղթի, ամէն տեսակ թղթէ շինած գործուածքներու, ինչպէս խաղի թղթերու, քթախա-տի տուփերու, սենեակներ զարդարելու տպած կամ քաշած թղթերու, ու ամէն տեսակ ասոնց նման թղթերու զատ զատ գործատուններ կան։ Նմա-նապէս փայտէ շինած գործուածքներու գործա-տուններ չափէ դուրս շատ են, որոնց մէջը երևե-լիները կառք շինողներուն, հիւսներուն (տիւրկէրնե-րուն), ճախարակագործներուն (չըխըրըխճըներուն), ու արձան փորողներուն գործատուններն են։ Եր-կու աղջիններուն շինած բաները շատ գեղեցիկ ու մաքուր են, բոլոր Եւրոպայի մէջ ասոնց պէս աղ-

վոր շինօղ քիչ կայ. ու Լեհաստան, Իտալիա, Մոսկոֆստան ու Տաճկաստան աս տեղաց կերթան։ Երաժշտութեան (մուզիքայի) ամէն տեսակ բերնի ու ձեռքի գործիքներու, գլխաւորաբար չէմպալօյէ գործատուններ ու արհեստաւորներ կան. որոնք իրենց արհեստին մէջը այնչափ յառաջ գացած են, որ բոլոր աշխարքին մէջը իրենց գործվածքներուն նմանը քիչ կայ, անոր համար ամէնը կըջանան Վեննայէն բերել տալու։ Երկրաչափութեան, փորձառական բնաբանութեան, ընդհայեցողութե̃ ու աստղաբաշխութե̃ գործատունները նոր նոր բաներ գտնելու ու շատ յառաջ երթալու վրայ են։ Շատ արծաթագործ, ու ակնագործներ կան։ Պղնձէ՝ աբոյրէ՝ երկըթէ շինած գործվածքներու, ու ժամացուցի գործատուններ կան, որ մէկզմէկէ աւելի անուն հանելու համար զարմանալի վարպետական բաներ կըշինեն։ Շատ չուխայի գործատուններ ալ կան, բայց Վեննայէն քիչ մը հեռու են։ Շատ քիմէական աղեր, ներկեր (պօյաներ), ու ուրիշ տեսակ տեսակ բաներ շինելու գործատուններ ալ կան, շատ ալ օրէ օր նոր նոր կըբանան։ Նեմցէները համբերօղ ազգ մը ըլլալով երբոր բանի մը ետեւէն կիյնան նէ՝ չեն ձանձրանար, քառսուն տարին կաշխատին, ինչվան չեն գտներ նէ՝ չեն դադրիր. կայսրն ալ իր ազգին բնութի̃ը ճանչնալով՝ ամէն կերպով իրենց կօգնէ, ու ասանկ զարմանալի գիւտեր կըգտնեն, ու շուտով կըկատարելագործեն։